

պատերուն վրայ, պատմութեան աչքերով զիտելու համար այն հրաշալիքները որ անյայտացած են: Այժմ գոյութիւն ունեցող բեկորներուն հասնելով պիտի կրնանք հաստատել հնախօսներու կողմէն արուած տեղեկութիւններուն ճշգոյթիւնը:

Ս. Ծննդեան եկեղեցիին ներքին զարդարանքները ճոխագոյն եղանակով մը կատարուած են Խաչակրաց ժամանակ: Այդ զարդարանքները երկու տեսակ են, մոզայիք եւ նկար, որ շքեղագոյն փայլ մը կու տային եկեղեցոյն: Մոզայիքներէն ամենէն խորհրդաւորն էր արեւմտեան կողմը ձակատի ներքին դրան վրայ Յեսսէի ծառը, քնացող Յեսսէի կողերէն երեք շառաւիղներ կը բուսնէին և կը բաժնուէին ձիւղերու, որոնց իւրաքանչիւրը կը կրէր Քրիստոսի նախնիքներէն մին: Նոյն ծառին վրայ ժէ. դարուն տակաւին կ'երևնային Յովել, Աննյա, Միխիս, Եղեկիեղ, Եսայի և Բաղդասմ՝ Մեսիայի նկատմամբ իրենց մարգարէական լատիներէն գրուածքներով: Տաճարին արեւելքը կը գրտնուէին հետեւեալ մոզայիքները, որոնց համառօտութիւնը կու տանք հոս. 1. Նիկիոյ Ժողովը (325), նոյն մոզայիքին մէկ կտորը տակաւին գոյութիւն ունի, 2. Կոստանդնուպոլսի Ա. Ժողովը (381), որ մինչ ցայժմ ամբողջութեամբ կը գտնուի, 3. Եփեսոսի Ժողովը (431), որուն երկրորդ մասը միայն կայ այժմ, բնագորին առաջին մասին բովանդակութիւնը պահած է Գուարէզմիոս, 4. Բաղկեդոնի Ժողովը (451) որ, բացի կամարաչէն և գրակալներու ստորին մասէն, գոյութիւն ունի այժմ, 5. Բ. Ժողով Կ. Պոլսի (553), ամբողջովին ջնջուած, 6. Գ. Ժողով Կ. Պոլսի (680), որմէ կը մնայ միայն կրկնակ աղեղնակամարը եւ արձանագրութեան վերի մասը, գրեթէ եօթ տող, չորսը մէկ կողմը և երեքը միւս կողմը, 7. Բ. Ժողով Նիկիոյ (787), ամբողջապէս ջնջուած: Մինչ միւս ժողովներուն բովանդակութիւնները յունարէն արձանագրուած էին, այս ժողովին արձանագրութիւնը լատիներէն է. Գուարէզմիոս ընդհատներով ընդօրինակած է և Տը Վոկէի կողմէն գիտնօրէն վերահաստատուած: Ժողովներու շարքին գլուխը պսակող ծոփօրները (frises), ինչպէս նաև պատուհաններուն անջրպետը բռնող հրեշտակները ամբողջովին քանդուած են:

Տաճարին հիւսիսային պատին վրայ ժէ. դարուն կը տեսնուէին հետեւեալ ժողովները իրենց բովանդակութեամբ. 1. Ան-